

6097

Uc b t m r

89199

U-65

20

Thru

1909

891.99

Ա-65

թիի 26

ՍԵՒ ՊԱՏԿԵՐՆԵՐ

ՅՕՐԻՆԵՑ

ՏԻԳՐԱՆ ԱՇՃԵԱՆ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Վ. Լ. Պ. ԶԱՐԴԱՐԵԱՆ ՆՂԱՍՅՐՆԵՐՈՒ

Կ. Պոլիս Չափագեղար քիւ 24—26

891.99

Ա-65



Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԴՐ. Ե. ԱՍՍՏՈՒՐԵԱՆ ԼԷ ՈՐԴԻՐ

1909

7011

891.99

Ա-65

այր.

ԱԶԱՏ ՄԱՏԵՆԱԴԱՐ

Թիի 26

800

16-ԱԸ

ՍԵՒ ՊԱՏԿԵՐՆԵՐ

ՅՕՐԻՆԵՅ

ՏԻԳՐԱՆ ԱՇԽԵԱՆ



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Վ. Լ. Պ. ԶԱՐԴԱՐԵԱՆ ԵՂԱՅԵՐԵՐՈՒ

Կ. Պոլիս Զագմագնրլար քիւ 24-26



Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐ. Ե. ԱՍՏՏՈՒՐԵԱՆ Լ. ՈՐԴԻՐ

1909

ԱՌ ԲԱԶՄԵՐԱԽՏ ՈՒՍՈՒՅԻԶ ԻՄ

Պ. ՄԵԼԻՈՆ ՂԵՒՈՆԳԵԱՆ

Աշակերտէն Ռաւօցիչին ,
Նրաէր մ'է այս խիս շատ ջրնջին,
Երախտիի իբր նրշան . . .
Զօնէ Տիգրան Թ. Աշտեան :



ԶԵՓԻՒՆ Է ՄԻԱՅՆ ՄԻՒԹԱՐԻՉ

Արշալոյս է, կը զարթնում: Արեգը դեռ հեռո՛ւն ... լայնատարած հորիզոնի ետին է թափուն: Օդը հանդարտ է խելօք ծովի անշարժութեանը նման միապաղաղ: Մերթ, լուրթ կապոյտին մէջ թրթռուն հոսանք մ'է կ'ելեւէջէ ու պարապութեան հետ չփուկելով քաղցրահնչիւն թաղեր մ'է կը բերէ ականջիս: Առաւօտեան սուրհանդակն է որ իր մեղմիկ շունչով կը սարսռայ և նազանոտ գընացքի հիանալի՝ քնքշութեամբ մ'երերուն՝ տակաւ, տակաւ կը մօտենայ այն կնոջ՝ որ աւերակներու սգալի մոխրակոյտին վրայ բազմած՝ գեղեցիկ աչերէն կաթկթող արցունքի կայլակները կը սրբէ տրտմաքին, և մերթ ընդ մերթ, թաց ու չոր աչերովը չորս դին կը նայի հրեշտակային անմեղութեամբ մ'եզակի ու կը դիտէ այդ փլատակներն անծի՛ր՝ որ ինքն է նրանց պահապանը հաւատարիմ, միակ լացողը անբաղդութիւնը դժոխային մուրով գրուած, և անողճ ճակատագրի մ'ենթակայ եղող սգաւոր Ազգի մը վրայ...:

Զեփիւռը կը մօտենայ խնկալի բուրումով սգալի կնոջ ու կսկսի տարուբերուիլ սիրոյ հմայքով մ'արբեցած ... և հեզիկ հեզիկ թրթռալով՝ նրա ցիւր ու ցան վարսերի ալիքներուն մէջ կը խորճուի ...:

Մազերը կ'երերան ու նուազկոտ դէմքին վրայ խուրճ, խուրճ կը լեցուին:

Կծու ցաւերու արգասիքն եղող այդ աղի արցունքը՝ նրա տոգոյն այտերուն վրայ կ'սկսի բիւրեղի նման պճլտալ և ադամանդի մը ջինջ թափանցկութեամբը ցոլացի՛ք՝ վառ, վառ լոյս մը կը ձգէ իր դէմքին վրայ նիհարցած ...:

Կինը մի պահ զովարար շունչէն կը շարժի թախծոտ աչերը՝ գոց՝ և կը կարծէ ըլլալ անմահութեան դրախտին մէջ կենսաշոյր:

Արցունքի հեղեղներէն սահմուկած դէմքը մի քիչ ժպտիլ կ'սկսի, սակայն միշտ խառն աղիողորմ ցաւակցութիւններու դա՛ռն հեղուկովը սեւաթո՛յր: Կը բանայ աչերը . . . աւա՛ղ . . . երազներու երանաւէտ աշխարհներուն մէջն էր մի պահ առաջ, և հիմայ, դարձեալ նոյն սգաւի ամփիթատրոնին վրայ, միակ պահապանը այդ աւերակներուն, միակ լացողը այդ տարաբախտութեան և ողբակոծ բուն՝ այդ սգաւոր վայրին:

Դա՛ չիրմաստան Մայր Հայաստանն է ողբալի:

Դիակներու կոյտով ծածկուած, աճիւնացած մոխիրներու տարածընուած դէզերով լեցուն և կարմիր արիւնով ներկուած ցցոտ ժայռերու ահագին զանգուածներով պաշարուած . . .:

Վայրա՛գ բռնապետութեան բոցաշունչ քամին, կոտորի բնաշինջ բիրտ բազուկը և մահուան մռա՛յլ ստուերն է անցեր այդ սգաւի ամփիթատրոնին վրայէն ժանտ մոլուցքով մ'ու արիւնկզակ ոգեւորութեամբ, խարելո՛վ, խամրելո՛վ քա՛ր ու քա՛նդ ընելով զայն . . .:

Եւ հիմա, լո՛ւռ կը կանգնի Մայր Հայաստանը սգաւոր, գլուխը՝ հակ, սիրտը՝ յուզուած և թաց աչերով խո՛ւլ, խո՛ւլ կ'երգէ իր ծո՛վ ցաւերը սրտակոտոր, անմխիթա՛ր և առանձին . . .:

Միայն գարնանային մեղմիկ զեփեւուն է որ ամէն առաւօտ արշալոյսի փաղփոռն շիթերուն վերեւէն և բուրաստանի ընդմէջէն անցնելով՝ կ'երթայ փայփայել նորա տխրամած դէմքը և վերաւոր սիրտը քնքուշ . . .:



Գարնան երեկոյ մ'է, մութը տակաւ, տակաւ կ'ստուարանայ, և ստուերները երկա՛ր սեւ պատանքներ դարձած՝ դալարազարդ բլուրներու եզական հմայքը կը գոցեն թո՛յլ, թո՛յլ շարժումներով մը թաղծոտ . . .:

Մայրամուտ արեգին ոսկեղոծ ճառագայթները ցանուցի՛ր՝ կը լուսազարդեն հեռաւոր հորիզոններու դերփուկ ու ցցոտ գագաթները մշուշոտ, և քիչ, քիչ, ուժասպառ հովի մը հեւքին նման տկարացած՝ կը նուաղին, կը մարմրին հոյլ, հոյլ և անոնց ցոլացիկ ծփանքը հոգեվարքէ լլկուող հիւանդի մը շունչին հանգոյն՝ կը ցնդին, կ'անյայտանան շամանթաղին մէջ անհունութեան խորերը պահուըտելով . . .:

Վերջալոյս է: Հորիզոնի ետին թաղուած է արփին: Ահա ճառագայթ մ'ալ կը լուսաւորէ աչ ու ձախ և մարմրուն ասուպի պէս կը փրթի, կ'իյնայ պարապութեան ծոցը լայնախոր . . .:

Կը մարի վերջին նշոյն ալ արեգին, ու լայնատարած մութ ստուերը կը տրիէ ամէնուրեք, անսահման: Երկնքի բաց-կապոյտ թաւիչը հետդնետէ կը բարձրանայ կարծես, ու սեւ, սեւ պատանք մ'է կը հագնի սգամած՝ սակայն լուսազարդուած՝ բիւրաւոր գընդերկներու աղամանդեայ շողերովը վառվռուն:

Կ'անհետի, կ'անհետի՝ վերջին ցոլքն ալ լուսավառ արեւուն և արեւմուտքը կը դառնայ սեւ գեհն մ'առանց կայծերու և առանց հուրի:

Անդնդախոր վիհ մը կառարեալ՝ իր չափազանց սեւութեամբը հնարեկ:

Սակայն գիշերուան մութը, դժոխային մաայութիւնը կո՛ւռ ու հոծ՝ անօսբանալ կ'սկսի . . .: Արեւելքը մեկանոյշ լոյսով մը կ'ողողուի: Հորիզոնի լանջքի ետեւէն կ'երեւի լուսինը որ տակաւ, տակաւ կը բարձրանայ մեղրալիւր լոյսով մը նուաղկոտ և յաւերժահարօի մը նազաճոտ գնացքին նման անջրպետին մէջ կը թաւալի:

Երկնքի բարձունքէն լոյսի բեկորներ վար կը թափթփին, մեղճոյ՜ ճառագայթներու կտորուանքն արծաթաղօծ, և վարը՝ սեւ

ստուգեցրը սգալի՝ իր մոռացկոտութեան մէջ կը խառնէ արծաթեայ շէն շողերը լուսնկային, և տոգոյն թոյր մը կը ձեւաքնէ գիշերուայ անհուն խաւարին մէջ :

Կարկաջահոս առունները լուսնի լուսէն ծփծփալով, բեկբեկուն ծալքերով արծաթային՝ գլգլ, գլգլ վա՛ր կը սահին օձապտոյտ աղօսներու ընդմէջէն . . . այդ ջուրերը ջինջ, յստակ կը փայփայեն, կը համբուրեն ու կը լզեն ինքնաբոյր ու դալարադարձ ափունքը առունին, և մեղմիկ խոխովալով՝ վա՛ր, վա՛ր կը թաւալին մթու-

թեան մէջէն, լուսնի աղամանդեայ ճառագայթներու ներքեւէն : Լճու, լճու է ամէն դի, բոյներն անձայն, որջերն անշուշտ, բնակարանները լճու . . . : Միայն անխոնջ առունին մեղմիկ խոխոյն է կը լսուի հազիւ հազ անհուն լռութեան մէջ գիշերուան :

Դաշտեր, ձորեր, դալարիք ու ծաղկունք լուռ պահած են կատարեալ և գիշերուայ սեւ սաւանին տակ ծածկուած՝ մո՛ւշ, մո՛ւշ քուն կը քաշեն անցաւ ու անվրդով . . . : Կը ներնէ բնութիւնը : Անքուն է միայն խափշիկ գիշերուան սիրահար լուսինը փառաւոր, նա՛, աներկիւղ ու անվարան կը թաւալի՝ ու կը չընչի պարապու-

թեան մէջ անծիր ցանցներով ու սփռելով իր լուսազեղ ճառագայթներն ամէ՛ն կողմ ու ամէ՛ն դի . . . և այդ տկա՛ր ճառագայթ-ներու լոյսովն է որ հեռուն . . . լեռան մը կողին մօտ մի խրճիթ կը նշմարուի հազիւ հազ . . . :

Սը քովը գետնին վրայ կը տեսնուի մի ռուսական զէնք ու անոր մօտ բաւականի չափ փամփուռներ և երիտասարդին գլխարկը սեւաթոյր : Երիտասարդը թաղուած ընթերցումի մէջ, մերթ կը կարմրի ու մերթ կը տոգունի . . . և յանկարծ, տեղէն ընդոտ ցափկելով զարնուած կը պոռայ .

— Ա՛հ, իմ աղբերն էլ մատնուեցա՛ւ . . .

— Դու եւս մատնուեցա՛ր, կը լսուի դուրսէն մի ձայն, ու ներս կը խուժեն կատաղիօրէն զօրքերը, նաեւ մի ծպտուած մարդ ու երիտասարդը ձերբակալելով՝ դուրս կ'եղնեն խրճիթէն և լեռան ետին կը կորսուին . . . :

ԱՐՅԱՒՐՈՏ ԳԻՇԵՐԸ



Գիշեր է : Երկնականա՛րը բեհեզեայ՝ սեւ շղարշով մը գուցուած է անհուն . . . :

Անծայրածիր տարածութեան մը մէջ անհամար աստղեր լուսազեղ փարոսներու նման կը վառին պլպլուն, և գոգ-ցես կը խայտան մեծ առեղանութեամբ, անհուն բարձունքէն վար ցանցներով լուսասփիւռ հմայքն ու քմայքը իրենց վառ, վառ ցոլ-քերուն . . . : Մարմրուն ասուպները կը խաչաձեւեն ցանուցիր՝ անհունութեան ծոցէն իյնալով վարի անսահմանութեան մէջ լճու ու անշուշտ . . . : Մո՛ւթ գիշեր մի՛ է խաւարին, արհաւիրտ գիշեր, խորհրդաւոր գիշեր . . . : Չ'կա՛յ լուսին, չ'կա՛յ ճառագայթ մը լուսաւոր, պլպլացող աստղերն ալ չ'ունին այնքան լոյս, որքան՝ լուս-նին մի ճառագայթը մեղանոյշ որ կ'արծաթազօծէ անծիր խաւարը դժօխային . . . :

Կ'արտասուէ՛ լուսաբաղձիկ գիշերը սեւ ու մրոտ արցունքներ՝ որոնք յորդառած՝ գարնանային անձրեւի խոշոր կաթիլներու նման պարապութեան մէջ կը թափին ողողելով վարի անսահմանութիւնը և ներկելով զայն մռա՛յլ ու սեւ գոյնով մը թաղծալիր . . . :

Կուլա՛յ գիշերը, կաթիլ մը շողի, մի տկա՛ր ճառագայթի հա-մար, որպէս զի դուրս տայ շատերուն իր խաւարտչին ծոցին մէջ կատարուած բոլո՛ր արարքներն անխիղճ, անգո՛ւթ ու տմարդի :

Եւ սակայն, չ'կա՛յ լուսին, չ'կա՛յ ճառագայթ մը լուսաւոր, պլպլացող աստղերն անգամ չ'ունին վառ լոյս մը փառաւոր, գո-հացում տալու լուսաբաղձիկ գիշերուան . . . :

Տարաբա՛խտ գիշեր, անլուսին գիշեր, մռայլո՛տ գիշեր, ո՛րը գիշեր . . . Ինչե՛ր ունիս ծոցիդ մէջ, ի՛նչպիսի անողորմ ու քստմնելի ժամեր կուգան, կ'անցնին քո մէջէն սոսկալի՛ արագութեամբ և լճու ու մոռնա՛յ . . . :

Անոնց տողանցումը որքա՛ն թեթեւաշարժ կը լինի և անոնց բացած ափօք որքա՛ն անտեսանելի, որքա՛ն արիւնոտ կ'ըլլայ քո սեւ մակարդակին վրայ խորհրդաւոր . . . :

Ահ, արհաւիրո՞ւտ գիշեր, սեւ գիշեր . . . :

Ու գիշերը կուլա՛յ, ու գիշերը սեւ արցունքներ փրփուր, փրփուր կը թափէ իր մրայոն աչերէն . . . : Եւ սակայն չ'կա՛յ լուսին, չ'կա՛յ շէն շողի ճառագայթ մը մեղրալիր, աստղերն անգամ չ'ունին փայլ . . . :

Գիշեր է: Երկնակամարը բեհեզեայ՝ սեւ վարագոյրով մը գոցուած է անծիր . . . Թէպէտ և չ'կայ լուսին, չ'կայ ճառագայթ մը արծաթեայ և աստղերն ալ անզօր լոյսով կը փալփին վերի անդունդին մէջ գեհենային: Սակայն դարձեալ, տկար, չա՛տ տկար լոյսի ճառագայթներ կը զրկեն այդ հեռաւոր բարձունքէն դէպի՛ վարը լուսազուրկ . . . :

Լոյսը քիչ է, մութը շատ, խաւարը խիտ. — դէ՛շ բան . . . :

Այդ քիչ լոյսի շնորհիւ, լեռնահովիտի մը բարձունքէն սեւ ստուերի մ'անցնիլը կը տեսնուի հազիւ հազ . . . : Այդ ստուերը չ'անցնիր, կը գլորի աւելի, կը գահավիժի կարծես . . . հաւարեկումի ցուրտ սարսուռով մ'անգութ . . . ստուերը քիչ, քիչ կը ցածնայ վա՛ր, վար, և դաշտին մէջ, և հարթ գետին վրայ: Տկար լոյսի աղօտ ճառագայթը ստուերին իսկական պատկերը կը գծէ հեանալիօրէն . . . — կն՞ջ մը պատկերը . . . կին . . . այդ ստուերը կին է եղեր և ուսին՝ մի փոքր բան, մի մեղէն կոյտ, մի նորածին մանուկ, բոլորովին մերկ, առանց մի շորի մէջ փաթաթուած: Հէ՛գ մանկիկ, խեղճ կին . . . :

Ի՞նչ է արդեօք այս դէպքը, ո՞վ է այդ կինը որ հալածուած կ'երեւի, որ մութին մէջ կը քալէ, որ խաւարը կը ճեղքէ, որ լեռան ցցոտ կուրծքէն վար կ'իջնէ ու կը փախչի, ու կը փախչի լաւահառա՛չ, սրտակոտոր, հաւաքե՛կ, բայց մոլեգին . . . :

Լեռան գագաթը ստուերներու շարք մը կ'երկարի, և այդ շարժուն երեւոյթները դէս ու դէն և դէպի՛ վար կը հակին, կ'իջնեն, կը գահավիժին լեռնէն դէպի ձոր, ձորէն դէպի՛ դաշտ և գիշակեր թռչուններու նման՝ արագ կը թռչին մթութեան մէջ՝ որսը, խոյս տուող որսը յափշտակելու, լափելու և վերջացնելու համար . . . :

Կը փախչի կինը խաւարի մէջէն հեւ ի հեւ, մանկիկն ուսին թմրած ու փաթթած . . . : Ստուերներն ալ կը թռչին, չ'են՛ վազեր, արագ, աւելի՛ արագ կ'երթան, կնոջմէ՛ աւելի՛ արագ կը վազեն բռնելու, զա՛յն բռնելու համար:

Դաժան զօրքեր են այդ երեւոյթները: Կը վազեն դիւային վազքով, կը թռչին արծիւի սո՛ւր թռիչով, և կը յառաջանա՛ն և կը մօտենան որսին, անբա՛ղդ որսին, հէ՛գ կնոջ, խե՛ղճ կնոջ . . . :

— Ո՛հ, անգութ զօրքեր ի՞նչ կ'ուզէք, ի՞նչ յափշտակութեամբ խելացնոր կը վազէք ձեր վայրագ յառաջացումին հետ տանելով գիշերուան ան ու սարսափը, սոսկալի խաւարը և արհաւիրքը դժոխային . . . :

Ի՞նչ կուզէք այդ կիներն ո՛հ, անխիղճ զինուորներ, ժանտ մօլուցքի սեւ հեղուկէն արեցողներ, անխղճութեան բաժակը ցմրուր քամող անդգա՛յ գինեմոլներ, ո՛ւր, ո՛ւր կը վազէք հեւալէն: Տըռ֊ փանքի գարշելի ու այրող հո՛ւրն է միթէ՛ ձեզ մղած մինչեւ հո՛ս. մինչեւ խաւարին մէջ, զինանոցէն գիւղ, գիւղէն դէպի՛ լեռ, լեռնէն դէպի՛ ձոր, ձորէն դաշտ . . . ու կնոջ ետեւ, ու հէ՛գ կնոջ ետեւ, ո՛ւ կնոջ ետեւ . . . : Ա՛հ, անգթութեան հարազատ զաւակներ, ո՛հ, բռնապետութեան վատչուէ՛ր, կոյր գործիքներ, ա՛հ, տարաբա՛ղդ Ազգին օճախներու մոխիրները շատցնողներ . . . : Ա՛հ, անգութ հալածողներ, դաժան ու մոլեգին զօրքեր, կ'երթա՛ք, կը վազէ՛ք, կը փախչի՛ք, կը թռչի՛ք և կը ջանաք բռնել խեղճ կինը, տկար կինը, Հա՛յ կինը . . . :

Կինը կը փախչի, կ'անցնի շուքի նման թաղծոտ գիշերուան խաւարի մէջէն . . . և ստուերները կը վազեն անոր ետեւէն, կուգան, կը մօտենան, ա՛հ, կը մօտենան կնոջ . . . :

Խեղճ կինն ուժասպառ կը կանգնի, լեզուն դուրս ձգուած՝ շուռջը հեւ ի հեւ, աչերը նուազկո՛տ, ո՛չ այլեւս մոլեգին, աջ ձեռքը վար ինկած, իսկ ձախովը տակաւին ուսին բռնած մանկիկը . . . : — Ա՛լ լմնցա՛ւ, ա՛լ կինը թակարդի մէջն է . . . :

Յանկարծ որոտում մը գիշերային խո՛ր լուութեան մէջէն, հըրացանի պայթի՛ւն մը . . . : Կրակի հոսանք մ'ակնթարթի մը մէջ անցա՛ւ . . . ճեղքեց մութը և զօրքերու կողմէն եկող կրակը նըպատակին ծառայեց . . . : Գնդակն էր սուլեց ու ծակեց մանկիկին մատղա՛շ կոնակը . . . : Կինը սարսափած՝ թեւը թողուց, մանկինը խո՛ւլ ճիչ մ'արձակելով վար ինկաւ . . . կինը ետին դարձաւ անաբեկած և անա՛ գնդակ մ'ալ շշնջաց, վը՛զ . . . բայց պարապ անբեկած և անա՛ գնդակ մ'ալ շշնջաց, վը՛զ . . . Զօրքերը մօտեցան, եկա՛ն, հասան կնոջ . . . և կինը, որդեկորո՛յս կինը՝ աչերն արիւնով լեցուած, վրիժառու ոգիով մը

մռնչեց կատաղիորէն ու նետուեցաւ զօրքերուն վրայ: Մի հատին կոկորդէն ուժգին սեղմելով՝ անոր գործը վերջացուց գետինը փռուելով զանի . . . : Երբ միւսին վրայ կը յարձակէր, դարձեալ հրացանը որոտաց . . . : Ահ, վատ գնդակ: Ափսոս որ այս անգամ կինն էր գնդակահար . . . և կինը թաւալազլոր ինկաւ դիմացի փոսին մէջ, ո՛ւր իր նորածին մանուկը նոր մեռած էր . . . :

Ու կ'արտասուէ՛ լուսակարօտ գիշերը կողկողաքին՝ սեւ ու մրոտ արցունք թափելով . . . կուլայ գիշերը մի ճառագայթի, մի լուսաւոր ճառագայթի համար, որպէս զի ցոյց տայ շատերո՛ւն իր մռայլ ծոցին մէջ կատարուած բոլոր արարքներն անթիղձ և ոճրագործութիւններն անգո՛ւթ ու տմարդի: Եւ սակայն, չ'կայ լուսին, չ'կայ ճառագայթ, պլպլացող աստղերն անգամ չ'են իսկ վառ, որպէս զի լոյս տան, որպէս զի լա՛ւ ցուցնեն շատերո՛ւն մե՛ծ ոճիրը տմարդային ու հրէշաւոր և գոհացում՝ լուսափաղձիկ ու արհաւիրոտ գիշերուան . . . :



ՀԵՐՈՍԸ

Գիշեր է: Երկինքն ամպոտ, մռայլը կատարեալ: Հիւսիսային քամին կը գոռայ երկնքի անհունութիւնը պատռելու չափ . . . :

Սեւ, սեւ ամպեր՝ դժոխային որոտումով մ'ահաբեկ՝ իրարու ետեւէ կը վազեն հորիզոնէ հորիզոն քամիի կծո՛ւ շունջին ուժգն-նութենէն յափշտակուած . . . : Կը փախչին կապարեգոյն թուխ-պերը մռայլիստ՝ և նրանց վիթխարի հեւքը ցի՛ց ժայռերու ժեռուտ զազաթներուն բաղխուելով՝ անգամ մ'ալ ետ կը դառնան սոսկալի արագութեամբ և լեռնաշղթաներու խորունկ հովիտներուն մէջ կը լեցուին . . . :

Անձրեալսա՛ռն հով, կը սուլէ, կը մռնչէ, կը գոռայ ու կ'ոռնայ . . . սրբելով, լզելով, առնելով գետնէն խիճ, աւազ, քար ու կը քշէ՛ կը տանի՛ լեռնէ լեռ, բլուրէ բլուր, սարէ սար, ձորէ ձոր, հովիտէ հովիտ և հեռուն, հեռուն շա՛տ հեռուն . . . :

Հովը կը հեծէ դառնաշունջ ու հեղձուցիկ և իր խելայեղ վազ-քին մէջ՝ լացի, կոծի, վշտի անհո՛ւն հոտանքներ առած՝ կը փախչի . . . մտրակելով գորշ ամպերն ահարկու, ծեծելով անսասան ժայռերու կարծր կուրծքը խորտ ու բորտ և կ'անցնի՛ վզվզալով ու գոռալով ամէն դի ու ամէն կողմ . . . :

Գիշեր է, երկինքն ամպոտ, մռայլը կատարեալ . . . վերը՝ դժոխային գոչեր, ամպերու որոտում, կայծակ ու փայլակ . . . վարը՝ արհաւիրքի մէջ խեղդուող լուսթիւն մը՝ խառնուած անձրեւի շխրտութիւն հետ երկա՛ր ու ձի՛գ . . . : Անհունը պատող խաւարին մէջ, վերը՝ բարձրաբերձ լեռան վերեւէն սեւ ստուեր մը կը փախչի . . . կը թռչի՛ քա՛ն կը փախչի, կը սուրայ՝ քա՛ն կը թռչի . . . արագ, շա՛տ արագ կը սլանայ այդ ստուերը . . . և դառնաշունջ հովը կարծես կը նպաստէ, կ'օգնէ նրա յառաջացման՝ զայն քշելով շա՛տ հեռու . . . լեռնէ լեռ, ժայռէ ժայռ և հեռու . . . աւելի հեռո՛ւ շա՛տ հեռու . . . կ'անհետի՛ շուքը երբեմն ձորի մը խոր տեղուանքը, և ակնթարթէ մը՝ կը նշմարուի միւս լեռան բարձունքը . . . ու կ'անցնի՛ երեւոյթը . . . կը քալէ, կը վազէ, կը փախչի, կը թռչի . . . կը սուրայ՝ շա՛տ շուտ շատ արագ . . . դարձեալ կը կորսուի շուքը . . . և ատեն մը կը թաղուի խաւա-

րին մէջ: Կը կորսուի՝ ... երկա՛ր չ'երեւիր ... և ահա՛, բաւական հեռո՛ւն լերան գագաթը կը տեսնուի դարձեալ ...:

Ստուերն այս անգամ կանգ կ'առնէ: Կը ցածնայ, կը բարձրանայ, ծոնը կը դնէ, մի քիչ անշարժ կը կենայ, ականջ կը դնէ ու նորէն ոտքի կ'ելնէ, քիչ մ'ալ կը յառաջանայ ու այս անգամ կանգ առնելով՝ երկա՛ր կ'ապասէ, կը ծռի, կը նստի, կ'երկարի սեւ լերան սեւ բարձունքին վրայ ...:

Փայլակ մ'ալ լերան բարձունքին վրայ ... հրացանն է կրակ կուտայ ... պո՛ւմմ ... ո՛ւռռ ... վը՛ղ ... վի՛ղ ... մի՛, երկո՛ւ, երե՛ք, չո՛րս գնդակներ կը սուլեն լերան վերեւէն ու կ'երթան միւս լերան կողերո՛ւն ... Թերեւս հո՛ն գտնուող մարդոց կողե-րուն ... և ստուերը կը շարժի, վեր կ'ելնէ, հրացանը ձեռին՝ կը վազէ, կը թռի, կ'անցնի, կերթայ ու կը կորսուի լերան ետեւ...:

Հրացանն այս անգամ միւս լեռնէն կ'արձագանքէ, մի՛, երկո՛ւ, երե՛ք ... և այս անգամ որոտընդոստ կը սուրա՛ն ու կը սուլեն անթիւ գնդակներ ... գոփայիյն գոչերուն հետ հրացան-ներո՛ւ պայթիւն, հովին ոռնոցը, ամպերուն որոտը, գնդակներո՛ւ սուլուցքը միատեղ խառնուած՝ վե՛ր, վե՛ր կ'ելնեն և կարծես կը պատռեն անհունութիւնը խաւարին ...:

Ստուերը դարձեալ կ'երեւի երրորդ լերան ստորոտն այս ան-գամ, հիմա կարծես անվրդով կը քայլէ, կը վազէ և սակայն ո՛չ առաջնուան առաջանութեամբն ու թեթեւաշարժութեամբը հիանալի:

Պահէ մը դարձեալ կ'երեւի, և այս անգամ հարթ գետնի վը-րայ, և կարծես գիւղի մը մէջ ... ծո՛ւռ ու մոռռ փողոցներէն անցնելով՝ գիւղին ծայրը մի փոքրիկ խրճիթի առջեւ կանգ կ'առ-նէ ... քովէն բանալի մը հանելով դուռը կը բանայ ու ներս կը մտնէ ... ներսէն մի տկար ձայն կը հարցնէ.

— Ո՞վ է:

— Ես եմ Մարեամ ջա՛ն, կը պատասխանէ ստուերը ...:

— Ա՛հ, եկա՛ր, Աղբէ՛ր, կը հարցնէ ներսի ձայնը:

Սենեակը կը լուսանորուի, և կանթեղին լոյսով կը տեսնուի սենեկին մէջ մի յաղթանդամ կտրիճ՝ որ ձեռքին զէնքը վար դը-նելով՝ կը մօտենայ աղջկան ...:

— Վըժժա առի քորի իմ, բայց տե՛ս, տե՛ս հո՛ս ի՛նչ կայ, ը-սելով՝ կը բանա սիրտը և ցոյց կուտայ անոր՝ արիւնով ներկուած չապիկը ... Աղջիկը սարսափած՝ կը նուաղի գետին գլորուելով. — Իսկ հերոսը՝ փսթաթին վրայ երկարած՝ վերջին շունջը կը փչէ նոր օտացած մահացու գնդակէն ...:

ՅԵՂԱՓՈԽՈՒԹԵԱՆ ԶՈՅԸ

Գիշերն անցեր է: Արհաւրոտ ու մռայլ ստուերը երերուն՝ խօլ երազներու երամին հետ անշունչ՝ քշուած են հեռո՛ւն ... անհու-նութեան ծոցը թագնուած ...: Երկնակամարէն կախուող անհա-մար ջահերու իւղը սպառած կարծես՝ տակաւ, տակաւ աղօտ լոյս մը կը ցանցնեն դէպ ի վար ու կը մարմրին, կը նուաղին և կը շիջին յետին ցուքերու հոյ մը թափելով՝ վարի անսահմանութեան ծոցը. անծանօթ խորշերու խորո՛ւնք տեղուանքը մո՛ւթ ու սև ...:

Գիշերն անցեր է: Արուսեակն է լերան վերեւ կը փալիլի մեղ-րալուսային մեղո՛յշ ցուքերով մ'արծաթեայ:

Անօսրացած խաւարը աղջամղջային՝ կ'անհետի՝ սեւ պատան-քով և անսահման և անոր կը յաջորդէ մթնշաղային արշալոյսը գու-նազեղ ...:

Արեւը դեռ հեռո՛ւն է ... լայնատարած հորիզոնի լանջին տակ կը հանգչի, լերան ստորոտը Գ... գիւղն է և նրա առջեւէն կ'անց-նի Տ... գետը փրփրկայոյզ ու աղմկալից: Յուզող գետը դաշտե-րու մի մասը ոռոգելով պարտէզներու ափին մօտիկ՝ ծառերն ար-մատախիլ ըրած՝ կատաղի մռնչիւնով կը սահի վա՛ր, վա՛ր յուզ-ուած ալիքներու յորձանքներովը մոլեգին:

Գիշերն անցեր է, արշալոյսն ալ հեռի է ... արեգակը հորի-զոնի ետեւէն վեր է բարձրացած: Դաշտեր, ձորեր, սարեր, լեռ-ներ իր ճառագայթներու սլաքաւոր զարկին տակ՝ վերակենդանա-ցեր են ... փաղիփու շիթերն առաւօտեան՝ իր կենսատու շողե-րուն տակ, մարգարիտի հատիկներու հանգոյն կը փալիլին մար-մանդին վրայ և կոյս բաժակներու մէջ լեցուած:

Առաւօտ է: Գիշերն հեռի է, արշալոյսն ալ թագնուած է:

Գ... գիւղը վերակենդանացած է: Գիշերային խաղաղութիւնը խանգարուեր է թռչնոց ճվլուկէն և գիւղացւոց զարթնումէն:

Բոլոր ծխնելոյզներէն մուխերը գուլաւ, գուլաւ կը բարձրանան գալարուն օձերու պէս և գիւղին վրայ գարշագոյն շլարշ մը կը կազմեն արեւու լուսաւոր ճառագայթներէն փայլելով ...:

Հմայիչ է տեսարանը: Գետը շարունակական վազքով կը սահի ու կը սահի ... արեւը կը լուսափայլէ նրա պղտոր ալիքները ահեղամուռնէ՝ որոնք խենդ ու խելար վէտվէտումով կը գլորին դէպ ի վա՛ր, դէպ ի վա՛ր ... հեռո՛ւն ... գետափին մօտ, սեւ կէտ մը կը նշմարուի ալեկոծ ջուրին վրայ: Դա՛ ձկնորսն է իր փոքր տկալատիւն վրայ ուղիղ կեցած՝ ուռկանը ջուրը կը ձգէ...: Գետափէն դուրս, դաշտերուն վրայ կը նշմարուին փոքր ու սպիտակ կէտէր: Նրանք նորածին գառնուկներն են որ կը խայտան դալարիքին վրայ: Կը ճարակին դէս ու դէն ցատկորտելով, և կը մայնեն քարղցրահնչիւն ձայնով մը սրտագրաւ:

Թէեւ շատ լուռ է հոս ու հոն, սակայն, վերջին ծայր սաստիկ աղմուկ ու խառնաշփոթ իրարանցումը մոլթ է գտած գիւղացիներու մէջ: Նրանք տակաւին խրճիթներու մէջն են, միայն հովիւներն ու ձկնորսները են որ շատ կանուխէն հեռացեր են գիւղէն: Դաշտի մարդն ալ եղներն առջեւը ձգած՝ հօ՛, հօ՛, ներով հասեր է իր գործատեղին:

Գիւղին անդորր վիճակը վայրկեանական կը փոխուի: Մի քիչ հեռուն, իրարանցում մ'է կ'սկսի: Զինուորներն են որ գիւղին մէջ աստանդական կը շրջին, կը վազեն ... դէպ ի՛ կտուր կը բարձրանան, փողոց կ'իջնեն, այս ու այն կողմ կը պտտին ...: Խաչօնց տունը կը փնտռեն, աւելի՛, խոյս տուող Խաչօն:

— «Խինզի՛ր, քեաֆի՛ր ... նէրէյէ՛ գաչտի», կատաղիօրէն կը պօռան ու հրացան կ'արցակեն ...: Աղիողորմ գիշեր, լաց ու կոծ, վայնասուն՝ իրարու հետ խառնուած՝ կը միանան հրացաններու որոտումին և կը վրդովեն առաւօտեան հանգստութիւնն ու անգործութիւնը ...:

Զինուորները գիւղացիի մը միջոցաւ կը գտնեն Խաչօնց տունը, դուռը ուժգնօրէն տապալելով ներս կը խուժեն ու վայրագ գազաններու նման պառաւի մը վրայ կը յարձակին՝ որ բազմ կեցած՝ դուրսի աղմուկներուն միտ կը դնէր ...: Պառաւն այս անակնկալ դէպքէն զարհուրած՝ սոսկալի ճիչ մ'արձակեց և սենեակին կողմը փախաւ ...: Նոյն միջոցին մառանէն դուրս թռաւ մի աղջիկ հեղարձակ ու դալկահար դէմքով ու դէպ ի՛ կտուր բարձրացաւ: Զինուորներէն մին նշմարեց զայն ու հետեւեցաւ անոր: Միւս զինուորներն ալ կարծելով փախստականին հետքն է երեւցած՝ դէպ ի՛ փողոց նետուեցան ...:


Զինուորը տանիքէն աղջիկը կը հալածէր «կեալո՛ւ գըզ...» ձայնելով, սակայն աղջիկը, առանց ոտքը կօխած տեղը տեսնելու կը վազէր տանիքէ տանիք ...: Իսկոյն խելացնոր աղջիկը կանգ առաւ, առջեւն այլեւս տանիք չ'էր այլ պարա՛պ ...: Սպօսէր չ'էր ըլլար, զինուորը զայն պիտի բռնէր, և բռնարարումն ու լիկումը անխուսափելի էր ...:

Աղջիկն իր վճռական որոշումը տուաւ, աւելի լաւ էր մեռնիլ, քան վրայ տալ Հայու նամուսը և ուստի, ինքզինքը տանիքէն վաք ձգեց դէպ ի՛ փողոց ...: Ոտքը սուր քարի մը հանդիպելով ծակեցաւ, արիւնն սկսաւ աղբիւրի պէս վազել ...: աղջիկն իր ցաւատանջ անկումին մէջ, զգաց մահուան սարսուռը ...: քիչ հեռուն, նշմարեց դարձեալ զինուորներ որ դէպի՛ իրեն կուգային: Նէ իսկոյն ոտք ելաւ և կաղն ի կաղ սկսաւ վազել արեան հետք մը թողելով իր ետին ...: Զինուորները զայն տեսնելով շուտ մը յառաջ անցան: Աղջիկը զայս նշմարելով՝ աւելի՛ արագ սկսաւ վազել, մոռնալով իր ֆիզիքական ցաւը, ոտքէն արեան հոսիլը ... և վայրկեանէ վայրկեան տկարանալը ...: Պատին անաղաք ապահելու բո՛ւռն փափաքը նրան աւելի ուժ մը տուաւ յառաջանալու և ազատելու ...: Սակայն դատաւճիռն անգուլթ էր և գաժան մահն՝ անխուսափելի ...: աղջիկը դարցեալ կանգ առաւ:

Ալ ո՛ւր գնար: Աղջեւը գետն էր, ետեւը՝ թշնամի զօրքերը: Ապրէ՛ր բարոյականով մեռած, թէ՛ մեռնէր պատիւով կենդանի մնացած:

Աղջիկը արոշեց դարձեալ այս վերջինը: Լաւ համարեց ջուրի մէջ խղդուիլ, քան ամօթի ու պշգանքի հեղեղին մէջ ...: Իսկոյն, երեսը խաչակնքելով՝ ինքզինքը ջուրը նետեց ու պղտոր գետի փրփրադէզ ալիքներուն մէջ կորսուեցաւ ...:

Զինուորները ոչինչ չ'էին չահած: Խաչօն գետը լողալով փախչէր էր զամանալի ճարպիկութեամբ, բայց միայն քոյրն էր որ զօհ կ'երթար պաշտելի՛ յեղափոխութեան ...:



ՄՆԱՍ ԲԱՐԵԱԻ ԱԻԵՐԱՎ ՕՋԱԽ



Վարդանը տունը չէր այդ գիշեր: Կէսօրին մի յաղթանդամ մարդ նրա բերած էր մի նամակ. նա դայն կարդալով, երեսը ծամածռած, զէնքերն առնելով դուրս ելած էր տունէն...:

Տունեցիներուն ոչ մի բան ըսած էր, և այս լռութիւնը մեծ ցաւ պատճառած էր նրանց:

Գիւղին ծայրը կը գտնուէր Վարդանենց տունը, լերան կողին վրայ հաստատուած: Տան առջեւը, դէպի հիւսիս, ցցոտ ժայռերը կը կանգնէին հպարտ ու խրոխտ, անոնց լերկ սարերը մինչեւ ամպեր կը հասնէին:

Այդ բարձունքին վրայ, այծեամբերու որջը, անգղներու և գիշակեր թռչուններու բոյները միայն կային կանգուն:

Մարդ էակը գերբնական ուժ ալ ունենար, չ'պիտ' կրնար այդ բարձրաբերձ կատարներուն հասնիլ... այնքա՛ն, որ անելանելի արահետ մը կը նշմարուէր այդ ապառաժներու միոյն կողին վրայ, և այդ ճանապարհը իր նեղ ու օձապտոյտ վիճակով՝ հազիւ մի թեթեւաշարժ եղնիկի անցք կուտար դժուարօրէն:

Ամայի էին այդ տեղուանքը և ամեհի ու կատղած բնակչութիւն մը կրնար ըլլալ այդ բարձունքներուն վրայ.— Բաղէներ, անգղներ, արծիւներ, եղնիկներ ու այծեամբեր և ուրիշ վայրի գազաններ...:

Այդ լերկ սարերուն վրայ, տեղ, տեղ կանաչութիւն մ'ալ կար, վայրի թուփեր էին անոնք, շա՛տ խոշոր, պարարտ ու թաւ:

Ահա՛ այս բարձրաբերձ լեռներու շղթան դէպի Հիւսիս երկաթելով պատուար մ'էր Օ... գիւղին և ձմեռները հիւսիսային բուքէն գերծ կը պահէր զանի...:

Այդ ժայռերուն դիմացը Վարդանենց խրճիթն էր շինուած, կարծես ուղտին առջեւ մըջին մ'էր կանգնած...:

Վարդանը տունը չէր այդ գիշեր, և տունեցիները մինակ էին բոլորովին մինակ...: Խրճիթը կը բաղկանար սենեակէ մը միայն, սենեակին ճի՛շդ մօտ՝ մառանը և անոր քովն օձախն՝ ո՛ւր կը պառ-

րաստէին կերակուրները: Մառանին ներսը, մի անկիւնը լայն ծակ մը կար տախտակով գոցուած: Այդ ծակը Վարդանը դիտմամբ բացած էր, կարգ մը պարագաներուն՝ անկէ ներս մտնել ելնելու համար: Ծակէն դուրս, ճիշդ դիմացը մի ճամբայ կար որ կը տանէր մօտակայ լեռը՝ ուրկէ մագլցելով կը բարձրանային վե՛ր... Երբուն կից էր հիւսիս նայող անագին ժայռերու երկա՛ր շղթան:

Վարդանը այդ ժայռերուն ստորոտը գիտէր կարգ մը թագըստոցներ ո՛ւր յաճախ պահուած էր խուզարկութեան կամ հետապնդողութիւն պահուն: Սակայն այդ բանը ոչ ոք չէր գիտեր և ինք՝ իր մէջ միայն պահած էր այդ գաղտնիքը:

Իրոջ Լուսիկան անգամ չէր ըսած թէ՛ հո՛ն, ժայռերու ստորոտը թագստոցներ կան և չէր ապսպրած քրոջ որ վտանգի մը պահուն՝ մառանի ծակէն փախչելով երթար, ապաստանէր անոնցմէ միոյն մէջ:

Վարդանն զգուշութեան համար չէր ըսած քրոջը, մի գուցէ մի օր՝ մատնուէր, և զինուորները քոյրը նեղելով՝ անկէ գաղտնիքը խլէին որով՝ նշանաւոր որսը ձեռք կ'իյնար...:

Գիշեր էր: Բնութիւնը կը ննջէր մուշ, մուշ. Օ... գիւղին բնակիչներն ալ քնացեր էին, ամէն դի կը տրէր խորին լռութիւն և խաւարը կը թագաւորէր ամէ՛ն կողմ...:

Վարդանենց տունը միայն կենդանութիւն կար. այն խրճիթին բնակիչները միայն արթուն էին:

Սենեակը լուսաւորուած էր աղօտ լսյով մը, և պատին վրայ՝ բաղմամբիւ ստուերներ կը շարժէին, կ'երկարէին, կը ձգձգուէին և հրէշի մը պատկերը ձեւացուցած՝ կը կ'ըսուէին սենեկին մութ ու լոյս անկիւններու ճեղքատուքին մէջ: Սենեկին վերի անկիւնը մի կ'ին պառկած էր վերմակին տակ լաւ մը ծածկուած, բայց գըլուխը վերմակէն դուրսն էր, և նրա տոգոյն այտերէն կը յայտնուէր, որ երկար ժամանակ անկողնոյ կը ծառայէր ու կը լկուէր օտակալի ցաւէ մը: Մեռելատիպ էր այդ կնոջ դէմքը, կմախք մ'էր կատարեալ, երեսի մօրթը պրկուած էր և ճակատին վրայ շատ մը ակօսներ բացուած էին. ձրձգուն մազերը երեսարձն ամբողջ գոցած էին, այդ ցանցառ, բարակ թելերը առանց մի ճերմակ մաղի, կը վկայէին կնոջ տակաւին երիտասարդ ըլլալը:

Կինը չէր քնանար, օտկայն նուաղուն աչքերը գոց էին...:

Այդ կինը Վարդանի մայն էր որ երկար ատենէ ի վեր կը տա-

ռապէր... Գիւղը չունէր իր յատուկ ու հմուտ բժիշկը՝ որ կարեւոր առողջացնել խեղճ կիներ։ Թէպէտեւ շատ փորձառական դեղեր տուած էին նրան, սակայն ապարդիւն մնացեր էին անոնք. այսպէս երկարօրէն հիւանդ էր Վարդանին մայրը։ Հիւանդին գլխուն վերեւ նստած էր մի աղջիկ, մազերը՝ սև, դէմքը՝ կայտառ և հրաշեայ։ Հաղիւ բոլորած էր 17 դարուններ։ Այդ աղջիկը ճշմարիտ գեղջկուհւոյ մը տիպարն էր։ Կարմիր կտաւէ հագուստ ունէր իր վրայ, վիզէն կախուած էր դեղին սաթերու երկար շարոց մը։

Աղջիկը գլուխը հակ' չապիկ մը կարելով կ'զբաղէր։ Սակայն մերթ Ընդ մերթ գլուխը վեր առնելով՝ աչքի ակնարկ մը կը նետէր հիւանդ մօրը վրայ... Այդ աղջիկն էլ Վարդանի քոյրն էր.— Լուսիկ ճանը։

Հիւանդն իսկոյն աչերը բանալով՝ նուաղկոտ ճայնով մը կանչեց.— Լուսիկ ճան...

— Ինչ է, մարէ ճան, ըսաւ աղջիկն ու չապիկը մէկ կողմ ձգելով՝ հիւանդին մօտեցաւ։

— Աղջիկս... ո՛ւր է Վարդանը։

— Տանը չէ, մարէ ճա՛ն։

— Ո՛ւր է, ո՛ւր, ա՛հ...

— Խապար չունիմ մարէ ճա՛ն, դեռ ցորեկ էր հեռացաւ տնից։

— Ահ, Վարդանս, վարդ... վարդ... Լուսիկս, դուք... երկ... ուք... էլ կը մնաք... մեն... ակ... Վերջին խօսքերն հազիւ հազ արտասանելէ ետք, խեղդուկ ճիչ մը բարձրացուց ու աչերը փակեց...։ Հիւանդը մեռած էր։

Լուսիկն սկսաւ դառնապէս հեծկլտալ և արցունքներով թըրջել մեռեալին թոշնած երեսը։

Որքան յուզիչ էր տեսարանը։ Դուրսը՝ մութ, մռայլ ու խորին լռութիւն կը տիրէր։ Գիւղն այդ գիշեր կարծես սուգի սեւ վերմակին տակ կը ննջէր անլաց ու անշշուռ, ինչպէս Լուսիկ ճանն իր գլխին կը ծածկէր նոյն գիշեր սև շղարշը սգալի...։ Գիշերային խոր լռութեան մէջ՝ ցաւոտ ճիչ մը կը բարձրանար կողկողապէս Վարդանենց տունէն։ Խեղճ Լուսիկը կատարեալ որբ կը գառնար այդ գիշեր։ Հայրն արդէն 95 ի դէպքին անգութ հարուածի մը զոհ գացած էր։ Մայրը, պաշտելի՛ Մարէն՝ այդ գիշեր կը թողուր զինքը միտ մինակ, պապենական աւերակ օճախին վրայ պահապան։ Վարդանն արդէն կէսօրին հեռացեր էր ասունէն, արդեօք

անգամ մ'ալ ետ պիտի դառնար թէ՛ այն էլ յաւիտեան պիտի զատուէր Լուսիկէն։

Այնպէս կը թուէր թէ՛ այս անգամ կոիւր սոսկալի էր, քիւրտերն այն օրը, անգթութեան սահմանէն շատ հեռացեր էին... արդէն Վարդանը հեռացած պահուն երեսը ծամածռած էր ու վըրջոված սրտով՝ զէնքերն առեր և հեռացեր էր։

Արդեօք ե՛րբ պիտի դառնար այս անգամ, միթէ պիտի՞ ուշանար և չպիտի՞ կրնար վաղորդեան լուսաբացին տեսնել անգամ մ'եւս մօրը ծիւրած մարմինը՝ որ պիտի գրկէր յաւիտեան սեւ հողը ցրտագին։

Վարդանը կուուոյ դաշտն էր... մայրը հրաժեշտի մեղմադցոտ քնարը կը թրթռացնէր այդ գիշեր և յաւիտեան կը հեռանար հայկական աշխարհէն, իր ետեւ թողելով սուգի սեւ պատանքն անսահման՝ որ պիտի ծածկէր ամբողջ Օ... գիւղը։

Լուսիկը կուլար գիշերային առանձնութեան մէջ մինակ ու տխուր... չ'կար մէկը նրան ասէր «մի՛ լար, մի՛ լար հէգ աղջիկ, սուգը մինակ քեզ չ'ողջունեց այլ՝ ամբողջ գիւղը»։

Լուսիկ մի պահ դադրած էր լալէ, ու գլուխը յենած էր մօրը սնարին վրայ։ Յանկարծ մի խուլ աղմուկ եկաւ հասաւ ականջին գիւղի միւս ծայրէն...։ Աղջիկը սրտաթունդ ոտք ելաւ մոռնալով դիակնացած մայրը, դուրս ելածին՝ կտուրին վրայ բարձրացաւ։

Զարհուրելի էր տեսարանը։ Գիւղի միւս ծայրէն հրդեհը բռնկւած էր և բոցերը սիւններու նման վեր կը բարձրանային լափելով... մօխի դարձնելով հայու խրճիթները։

Բոլոր գիւղացիները շփոթած՝ ոտքի ելեր էին։ Մին կը փախչէր, մին կը թագնուէր, մի ուրիշ օգնութիւն, գթութիւն կ'ազաղակէր։ Աղիողորմ ճիչեր բոցերուն հետ միացած վեր կը բարձրանային դէպի՛ Գահը... ո՛ւր Աստուած մը կը թագաւորէր...։ Կիներ կը հառաչէին արտասուաթոր աչերով, շատեր բողբոջ և անէծքի սո՛ւր սլաքներ կը նետէին դէպի՛ այդ Աթոռը երկնակառոյց... մանուկներ կը հեկեկէին դառնագին և շատե՛ր ոտքի կ'օթան կը լինէին։

Համաճարակ հրդեհը գիւղին մի մասը լափեր էր ե՛րբ հրացաններու պայթիւնը լեռ, սարթնթացուց։

Քիւրտերը խոյս տուող էրիկմարդերը կը հալածէին գնդակահարելով զանոնք...։ Շատ մը գաղանարարոյ զինուորներ իրենց

դաժան տափանքի ձայնին ականջ կախած էին բռնաբարելով հայ աղջիկներն ու լլկելով զանոնք անգթօրէն:

Բոցերն ամէն դի լուսաւորած էին:

Լուսիկը լուռ . . . բայց սիրտը ճմլած կը դիտէր սոյն Սողոմ-Գոմորեան տեսարանը . . . : Հրդեհը տակաւին իրենց տան չէր հասեր:

Իսկոյն նշմարեց որ բազմութիւնը դէպ իրենց բնակարանը կուգայ ու այդ դժոխային գոչերուն մէջ լսեց մի զինւորի ձայն որ կ'ըսէր «Վարդանի պուլզ, օ՛ ֆէտայի կեավուռի թութմալի» . «Վարդանը փնտռեցէք, այդ կեավուռ յեղափոխականը ձերբակալել պէտք է» : Լուսիկն այդ գոյժը լսելով ախ մը քաշեց ու կտուրէն ցած իջաւ աճապարանքով:

Հազիւ ոտքը դրած էր տան սեմին վրայ՝ երբ սենեակին մէջ գտաւ երկու աղջիկ կեցած՝ կ'արտասուէին, անոնցմէ մին դարձաւ ու ըսաւ .

— «Փախչինք Լուսիկ ճա՛ն, փախչինք . . . զինւորները երեքիս հալածում են» :

Այդ գուժկանին վրայ Լուսիկն առաջ անցաւ ու մառանը մը տաւ, երկու աղջիկներն հետեւեցան անոր . . . նոյն միջոցին զինւորները ներս խուժեցին և ուղղակի մառանը մտան . . . : Սակայն աղջիկներն արդէն խոյս տուած էին ծակէն ու բռնած էին լերան ճամբան:

Զինւորները դարձեալ սենեակը մտան ու մօտեցան հիւանդին, բայց այն արդէն վաղճւց մեռած էր:

Զօրքերը ձգեցին այդ թափուր վայրը, դուրս ելնելով՝ ուղղուեցան դէպի լեռ . . . կարծես բնազդն էր զիրենք դէպ այդ կողմը կը մղէր:

Դիչերն արդէն անցեր էր, արշալոյսն ալ ծագեր էր . . . զինւորները մթնշաղին մէջ՝ ապառաժներու կողքին վրայ շարժուն ստուերներ նշմարելով՝ թողուցին լերան ճամբան և սկսան ժայռերն ի վեր մագլցիլ:

Յարգելի ընթերցողին ծանօթ են սոյն ապառաժներն՝ որոնց կողէն ի վեր մագլցիլը մարդ էակին գործը չէ: Սակայն կը լինի պարագայ մը որ մարդս հրաշք կը գործէ վտանգի կամ տագնապի պահուն: Մարդը չէ որ այն ժամանակին եղակի քաջագործութիւններ կը կատարէ այլ՝ սրտին զգացումն է որ զայն կը մղէ հրաշագործութեան:

Այդ երեք գեղջկուհիներն այնքան փափուկ ու այնքան տըկար, և սակայն ապառաժներու անել ուղիներէն անցեր էին ու շատ վեր էին բարձրացեր . . . : Ազնիւ զգացումն էր որ զիրենք մղած էր հո՛ն, մինչե՛ւ այդ բարձունքը: Նամուսն անաղարտ պահելու տենջը՝ նրանց թռիչ տուած էր մինչև սարերն հասնելու:

Իսկ զինւորները տափանքի հաւաճող ուժէն մղուած՝ անոնք եւս բարձրած էին վիթխարի ապառաժներու դէպի լերկ սարերը: Երեք աղջիկները նշմարեցին որ զինւորները իրենց շատ մօտն են: Վճռեցին երեքն ալ զերծ մնալ անպատուութենէն:

Վերջին ակնարկ մը ձգեցին այդ հեռաւոր բարձունքէն միասօցող գիւղին վրայ՝ որուն բոլոր աւերակները արեւու թարմ ճառագայթներուն տակ պարզ կը տեսնուէին:

Վերջին արցունքի կաթիլներն ալ սրսկեցին վարը. — Երկնային ցողեր մը փալփուռն . . . ու երեքն ալ ձեռք ձեռքի տուած «Մնա՛՛ս բարեաւ աւերակ Օճախ . . .» ձայնելով՝ միասին վար քահավիժեցան . . . :



ԱՐԴԱՐ ՎՐԵՑԸ



Թ... գիւղն աւերակ էր դարձեր: Տուններն ամբողջ քար ու քանդ էին եղած: Տեղ, տեղ միայն կիսակործան պատեր կանգուն կը մնային՝ որոնց վրայ արեան հեռքեր կային դեռ...:

Մի տեղ գանկերու կոյտ մը կար, և հոս, հոն ճրճուած էին զիւններ, կտրտուած թեւեր, ոտքեր... և պատառոտած զգեստներ...:

Մի ուրիշ տեղ, մոխրի դէզեր ու քիչ մ'անդին արեան լճակներ՝ որոնք թանձրանալով լուրթ կապոյտ գոյն առած էին. այսպէս, ամէն դէ, ամէն կողմ սրտաճմրիկ տեսարան մը կը պարզուէր:

Ծառեր, ճղեր անգամ չկային Թ... գիւղին շուրջը, կամ մօտերը... բոլորովին ամայի, թռչուն մ'անգամ չէր տեսնուեր հոն, ու չէր լուրեր անոր ճկլոււմը քաղցրանուագ...:

Ամէն բանէ զուրկ, ամենէն լքուած էր այդ աւերակ գիւղը հայկական...:

Ողբակոծ բուն անգամ ձգեր էր այդ վայրը թափուր և հեռունները թռչեր էր ցուրտ կերպարանքով մը խորթ...:

Փլատակ էր դարձեր Թ... գիւղը և բնաջինջ էր եղած իր բոլոր հանգամանքներով: Բռնապետութեան սուր թուրն էր շողացեր անոր վերեւը և անգթութեան սև սաւանը ծածկած էր զանի:

Հայ կ'ապրէր հոն, ա՛յդ գիւղին մէջ, ա՛յդ խրճիթներուն տակ որ հիմա քար ու քանդ են եղած:

Դեռ երէկ, հո՛ն կենդանութիւն կը տիրէր, հո՛ն Աստուած կը փառաբանուէր, հո՛ն մարդ էակներ կը շնչէին, հո՛ն աստուածեղէն կենսատու ձայնը կը հնչէր ուժգին...:

Իսկ այսօր, մահուան ուրուական կը թափառի հո՛ն անտեսանելիօրէն, սուգի ստուերներն կը շարժին այդ փլատակներուն վերեւ. կենդանութեան ո՛չ մի նշոյլ, ո՛չ մի շշուկ, ո՛չ մի ձայն...:

Լճու... լճու... գերեզմանական լուրթիւն մը կը տիրէ հո՛ն...:

Գերեզմանոց է դարձած երէկի կենդանի գիւղը... դամբարաններ չ'կան հո՛ն, այլ՝ հողի կոյտեր... փլիկած պատերու կրտորներ ծածկած են հարկւրաւոր ջախջախուած մարմինները:

Հո՛ս փշրուած գանկ մը, հո՛ն դաշոյնէ ծակծկուած մարմին մը, քիչ անդին կնոջ գլուխ մը մագերու փունջին մէջ ծածկուած և մի ուրիշ տեղ, յոշոտուած փոքր մանուկներ:

Տխուր տեսարան...: Գաղանաբարոյ կը քերու անմեղ զոհեր, անգթութեան աւերի՛չ ձեռքի յօրինուածներ... բռնապետութեան ժանգոտած մանգաղի առա՛տ հունձքեր:

Ո՛հ, Թ... գիւղ, դեռ երէկ կենդանութեան անո՛ւշ շունչը կը պոռթկար քո բերնէն, իսկ այսօր մահուան ժահրոտ շունչը կուգայ խղդեղ ամէ՛ն ինչ...: Երէկ դրախտ մ'էիր օդասուն դիրքովդ, քո պաղուկ ջուրովդ, քո դալար ծառովդ ու ճիւղովդ, իսկ այսօր էրէկի հակապատկերը:

— Աւերա՛կ, փլատա՛կ, մոխի՛ր, աճիւնացած մարմին ու դիակներու կոյտեր:

Մի քանի օր առաջ այս գիւղէն հեռացան 8 կտրիճներ, թեւեւ նրանք միայն ողջ մնացին շատ հեռունները գնալով կոխի համար, իսկ մնացածները բոլո՛րն էլ. — այր, կիւն, տղայ, աղջիկ, երիտասարդ ու երիտասարդուհի... ամէ՛նն ալ սրախոխող եղան...: Այրուեցան, գնդակահար, դաշունահար, հրո՛յ ճարակ...: Այսպէս, բոլո՛րն էլ ոչնչացան...: Եւերա՛կ դարձան...: Տո՛ւնն ալ, տե՛ղն ալ, նամո՛ւսն ալ, կեա՛նքն ալ, ամէ՛ն ինչ բնաջինջ եղան...: Անարդարութեան զոհ, բռնապետութեան զոհ և անգթութեան զոհ եղան...: Քացին:

Թ... գիւղը փլատակ մը դարձեր էր: Տուններն ամբողջ տակն ու վրայ եղած էին, դէս ու դէն փլիկած օրմեր կը մնային կանգուն և այդ որմերը ներկուած էին կարմիր արիւնով:

Այսպէս էր Թ... գիւղին տեսարանը, և այսպէս կը պարզուէր բոլոր անցորդներուն:

Յանկարծ լերան վրայ երեւցան 8 կտրիճներ, ոտից ցզուլս զինուած ու մէյմէի Մօսէնի ի ձեռին...: Նրանց զարմանքը մեծ եղաւ, երբ գիւղը գտան բոլորովին աւերակ: Իսկոյն լեռնէն վար իջան ու սկսան այս ու այն կողմ շրջիլ...: ամէ՛ն տեղ մահ օրփուած էր, կենդանութեան ո՛չ մի նշոյլ, ո՛չ մի ճառագայթ կար հոն...: Երիտասարդներն այս անակնկալ տեսարանէն զարհուրած,

կատողած խելագարներու նման իրարու երես նայեցան ապուշ, ապուշ. միայն աչերու շարժումով խօսեցան իրարու հետ, կարծես մին միւսէն կ'ուզէր հարցնել թէ՛ «այս ի՞նչ է»:

— Եթէ մենք հնադարեան Հայկի արիւն ունինք մեր երակներու մէջ, և առնական սրտի մը կորովը մեր կապարէ իրանին տակ, այս պահուս կը թողնենք սա վայրը ու կը գնանք հարիւրաւոր զոհերի արդար դատն ու իրաւունքը պահանջել այդ բարբարոս քրդերից: Ըսաւ անոնցմէ մին:

— Եթէ մենք Հայի իսկական ու հարազատ օրդիններ ենք, գոչեց մի ուրիշ, հարիւրաւոր զոհերի փոխարէն հաղարաւոր զոհ կը պահանջենք:

— Ա՛հ, իմ պաշտելի Նաղօն էլ զոհ է գնացեր: Արդեօք պահեց նամուսը անաղարտ, թէ՛ մեռաւ լիկուած...: Ո՛հ, փլատակ, ձայն տո՛ւր ձայն և ասա՛ իմ Նաղօն ի՞նչպէս մեռաւ, քաջաբար թէ վատօրէն: Գոչեց մի ուրիշը հեծեծելով:

— Վրէ՛ժ... գոռաց խմբապետը:

— Վրէ՛ժ, արձագանգեցին միւս ընկերները:

— Ճա՛ն տղերք, բոլոր այս անշունչ իրերը, սա փլատակին տակ հանգչող բոլոր մեր հայրերը, մայրերը, եղբայրները, քոյրերը նշանածները մի խօսքով, ամբողջ զոհուողները թո՛ղ շունչ առնեն ու մեր գլխին անէ՛ծք կարդան եթէ նրանց արդար վրէժը չլուծենք, եթէ մեր զէնքերովը ու եսթաղաններովը նրանց գանկերը չփշրենք, եթէ նրանց տներն ասոնց նման աւերակ չդարձնենք ու չթափենք թշնամիին սև արիւնը առատօրէն...:

Մեր կեանքը թանկ է ձա՛ն տղերք, զի մենք տանջուողը պաշտպանող տարր ենք, գնդակին առաջն վաղող ենք...: Մեն, անդր յառաջ, գնանք էլի թշնամիին դիմաւորելու մեր ոսկի փամփուշտներով, գնանք էլի կռուելու, վրէ՛ժը լուծելու բոլոր այս զոհերին՝ որ կը հանգչին հոս»:

Խմբապետն այս խօսքերն արտասանելէ ետք՝ յառաջ անցաւ և նրան հետեւեցան միւս բոլոր ընկերները:

Փոքրիկ զօրախումբը ճամբայ ինկաւ, գիւղի ստորոտէն քալելով՝ իջաւ ձորին մէջ ու դէպի լեռ բարձրանալով անոր ետին թաղուեցաւ...:

Գիշերը բաւական անցեր էր, երբ կտրիճները հասան մի գիւղ: Երկար ճամբայ մը կտրած էին անոնք և շա՛տ յոգնած էին: Անօ-

թութիւնը զիրենք սաստիկ կը նեղէր, հաց ու հանգիստ հարկ անհրաժեշտ էր այդ խմբին:

Գիւղին հարաւային կողմը, մի ճորակին մէջ իջան ու նստեցան խոտերուն վրայ: Խմբապետն իսկոյն կանչեց իր մօտ ընկերներէն էն ճարպիկը — Վարդօն և ապապրեց նրան որ գնայ Թորոսեց տունը և անկէ բերէ հաց, պանիր ու կուժ մը ջուր: Վարդօն այս հրամանին վրայ ճարպիկ շարժումով ընկերներէն հեռացաւ ու ձորակէն լեռը բարձրանալով դէպի վար իջաւ ու փողոցներուն մէջ անյայտացաւ:

Կէս ժամ յետոյ, Վարդօն նրանց բերաւ առատ հաց ու պանիր, իսկ ջուր չկար:

— Տօ՛, ինչո՛ւ ջուր չբերիր, հարցուց խմբապետը:

— Թորոսն հիմա հոս կը գայ իր կուժ մը ջրով, պատասխանեց Վարդօն խոշոր կտոր մը հաց թխմելով բերանը:

Հինգ վայրկեան յետոյ լեռան վերեւն սառուեր մ'երեւցաւ, Վարդօն իսկոյն ետին դարձաւ ու աչերը սեւեռեց դէպի լեռ, մանրերկրորդի մը մէջ շտկուեցաւ անվրդով ու ըսաւ.

— Թշնամի չէ, Թորոսն է. խօսքն աւարտելէ ետք ոտք ելաւ մութին մէջէն ձայնեց.

— Ո՛վ է, Թորոս դու չե՛ս:

— Թորո՛սն է Թորոսը... Վարդօ ճան:

— Տնաւե՛ր, շո՛ւտ արի հասի՛ր, հացը պողպատ մնաց:

Թորոսը լեռնէն վար իջաւ և մօտեցաւ խմբին կուժը մէջտեղ դնելով:

— Բարի՛ եկար Թորոս, բոլորը կամացուկ մը ձայնեցին:

— Ձեզ բարի տեսայ, արձագանգեց Թորոսը:

Ընթրիքն աւարտելէ ետք կուշտ մը ջուր խմեցին, ու ամէն մէկը մէկ կողմ քաշուեցաւ քչիկ մը հանգչելու համար: Միայն խմբապետը նստած կեցաւ և Թորոսը կանչեց իր մօտ: Թորոսը մօտեցաւ անոր ու սկսան անձայն խօսիլ...:

— Դու ան ասա՛, Թորոս, յարեց խմբապետը, Արթինն ու Սեդրակը գիւղո՞ւմն են.

— Ձէ, պատասխանեց Թորոսն առանց յապաղելու:

— Ինչո՛ւ:

— Նրանք հեռացան գիւղից հէնց այսօր:

— Պատճա՞ռ, հարցուց խմբապետը նեղանալով:

— Նրանք կանչուեցան Հ... գիւղը:

— Է՛լի կռիւ կայ այդ կողմը, հարցուց խմբապետը զայրա-
նալով:

— Կռիւը սոսկալի է այս անգամ և մերոնք, մեծ ուժի կը
կարօտին:

— Ա՛հ, Սուլթան, բոլոր այս չարիքների աղբիւրը դու ես,
անգութ գաղան, ձայնեց խմբապետը հառաչանքի դառն ու կծու
չեչեքերով, և ձեռքը տարաւ մռայլամած ճակատին:

— Դուք ո՛ր գնում էք հէնց այս գիշերանց, հարցուց Թորոս
խմբապետին:

— Դանի որ Հ... գիւղը ճգնաժամի մէջ է և մեր ընկերները
ուժի պէտք ունին, կը գնանք մենք ևս նրանց օգնելու և արդար
վրէժը լուծելու թ... գիւղին՝ որ դեռ մի քանի օր առաջ աւե-
րակ դարձրին դա՛ վատ քիւրտերը:

— Խնչ ասում ես, Թ... գիւղն աւերակ է դարձեր, հարցուց
Թորոս զարմանալով:

— Աւերակ, փրատակ, մոխիր և քար ու քանդ, ըսաւ
խմբապետը գլուխն երերցնելով:

— Վրէժ, վրէժ լուծելու է անյապաղ, գոչեց Թորոս հրացայտ
աչերով:

— Ճա՛ն, աղերք, չո՛ւտ ոտք ելէք, վե՛ր կացէք, գոչեց խմբ-
ապետը:

Ընկերները բոլորն ալ ընդոստ արթնցան խոր քնէն խմբապետի
գո՛ւ ձայնին վրայ և շուտ մը զէն ի ձեռին մօտեցան անոր քով:

— Տղե՛րք Հ... գիւղը տագնապի մէջ է, ընկերները ուժի են
սպասում, գնանք նրանց օգնութեան, գնանք մեր վրէժը լուծե-
լու և արդար պատիժը տնօրինելու այդ շներին՝ որոնք թռւով
չատ շատ են մեր եղբայրներից թէ՛ բնակարանով և թէ՛ հողւով և
որ ուղւում են մի քանի տուն հայերն էլ ոչնչացնել:

— Դնանք, գնանք, ձայնեցին բոլոր ընկերները, ու ոտք
եղան: Թորոս անոնց բարի ճանապարհ մաղթելով և մի քանի քա-
ջալերական խօսքեր արտասանելով՝ կուժն առաւ ու դէպի լեռ
բարձրացաւ...

Խմբապետն անցաւ ձորակի դէպ միւս կողմը և օձապտոյտ
ճամբաներէն անցնելով միւս ընկերներուն հետ միասին լեռան ետև
թաղուեցաւ:

Դիչերը չատ անցեր էր երբ փոքր դօրախումբը հասաւ Հ...
գիւղին արեւելեան կողմը գտնուող լեռնահովիտին մէջ. հո՛ն ա-
մէնքը կանգ առին: Հաղիւ մի քանի վայրկեան անցեր էր երբ
յանկարծ հրացաններու պայթիւնը լսեցին գիշերային խաւարին մէջ:

Հրացաններու ձայնը հեռու տեղէ չէր գար, գնդակներու
վզվզոցը չատ մօտէն էր կը լսուէր: Խուլ ձայներ, իրարանցում
լեռնէ լեռ, ձորէ ձոր կարձագանգուէին: Խմբապետն հրաման
ըրաւ Վարդօին որ լեռը բարձրանայ ու դիտէ:

Վարդօն անմիջապէս թեթեւաշարժ այծեամի մը նման լեռը
բարձրացաւ և հինգ վայրկեանէն վար իջաւ:

— Մերոնք մեր կողմը գտնուում են, ըսաւ Վարդօն. իսկ թըշ-
նամիները գիւղին միւս ծայրը:

— Շատ լա՛ւ, գոչեց խմբապետը, մի քիչ հանգստանալով:
Վարդօ՛, տե՛ս անելիք գործդ: Հիմա պիտի գնաս գիւղ. սատանա-
լից աւելի ճարպիկութեամբ գիւղին հարաւային կողմը կրակ կը
ձգես, ետքը կը դառնաս դէպի հիւսիս, այն տեղից էլ կրակը
կուտաս, յետոյ մեր ընկերներին կը գիտցնես թէ օգնութեան եկել
ենք, ու կը դառնաս արեւմուտք, ո՛ր անկիւնից երեք գնդակի
ձայն առիւր դու այդ կողմը կ'ուղղուիս ու կը տեսնես մեզ հո՛ն
պատրաստ: Հայտա՛ քաջս, քեզ տեսնեմ, խօ, դու քո հօր հա-
րազատ զաւակն ես Վարդօ...:

Վարդօն այս ամէնն աղէկ մը մօտիկ ընելէ ետք, շուքի պէս
անոնց քովէն անցաւ ու գիշերային մթութեան մէջ կորսուեցաւ...:
Խմբապետն արդէն միւս ընկերներով գրաւած էր այն կողմը՝
որ թշնամին կը գտնուէր այլ եւս իրենց և միւս կողմող ընկերնե-
րու միջեւ...:

Պատրաստ՝ կ'սպասէին հրդեհի բռնկման:

Իսկոյն գիւղին հարաւային կողմէն շէկ բոցերը բարձրանալ
սկսան և քիչ քիչ ծաւալեցան. կէս ժամէն հիւսիսային կողմն ալ
հրդեհն սկսաւ: Դիւղը դարձաւ կատարեալ գեհնն մը: Սոսկալի
վայնասուներ, քրդուհիներու ճիչեր, աղիողորմ ձայներ, խառնա-
շփոթ իրարանցում չորս կողմերէն սկսան լսուիլ...

Իսկոյն երեք գնդակ իրարու ետեւէ արձակուեցան, անիկա
խմբապետի պայմանադրական նշանն էր Վարդօյի հետ:

Վարդօն անոնց մօտն էր ու կռիւն սկսած էր: Թշնամիներն
ահաբեկած՝ ինչ ընելին չէին գիտեր, հրդեհը արագ արագ կը լա-

փէր ամբողջ գիւղը... հրացանները կ'որոտային, աղմուկն ու ժխորը հետզհետէ կ'աւելնային և կը պատռէին վերի անհունութիւնը...:

Կռիւր տեւեց մինչեւ առաւօտ, քրդաբնակ գիւղն ամբողջ աւերակ պարձեր էր: Հայերը շատ քիչ զոհ ունեցած էին, իսկ թըշնամիները մեծ կորուստ մը վրայ տուած էին...:

Ընկերներէն միայն մի քանիներ մեռած էին, անոնց թիւէն էր քաջ Վարդօն:

Ուխտեալ զինուորները իրենց վրէժը լուծած էին... այլ եւս զոհ սրտով կը հեռանային Հ... գիւղէն...:

Թ... գիւղի զոհերն ալ անչճճնչ կը հանգչէին այդ փլատակներուն տակ...:



Ց Ա Ն Կ

Առ բազմեալիս ուսուցիչ	3
Զեփիւռն է միայն մխիթարիչ.	5
Խոնիքը	7
Արհաւրոտ գիւերը.	9
Հերոսը	13
Յեղափոխութեան զոհը	15
Մնա՛ս բարեաւ աւերա՛կ օնախ.	18
Արդար վրեժը.	24

8 U 9

1	the principles of...
2	the principles of...
3	the principles of...
4	the principles of...
5	the principles of...
6	the principles of...
7	the principles of...
8	the principles of...
9	the principles of...
10	the principles of...
11	the principles of...
12	the principles of...
13	the principles of...
14	the principles of...
15	the principles of...
16	the principles of...
17	the principles of...
18	the principles of...
19	the principles of...
20	the principles of...

Զարդարեան Գրատունը յուլ. 10էն ի վեր հրատարակած է հին ու նոր ազգային ու հայրենասիրական գործերու շարք մը, որոնք մեծապէս գնահատուած են ընթերցասէր հասարակութեան կողմէ:

1. Սել Հոդեր կամ Յեսիմ Գիշեր Արարեսեան. Թատերգ.	2
Պետրոս Դուրեանի. 5 արար.	2
2. Աւերակ (Բանի յիշատակներ). Վահան Թովմենցի.	1
3. Ընդարձակ Հայկական Երգարան. Ա. Հատոր.	3.50
4. Վանգոյժ. Խրիմեան Հայրիկի.	1.50
5. Երգեր եւ Տաղեր. Պետրոս Դուրեանի, (պատկերով).	1
6. Հայգոյժ. Խրիմեան Հայրիկի.	2
7. Ընդարձակ Հայկական Երգարան. Բ. Հատոր.	3.50
Նոյնը Ա. և Բ. Հատոր 7.50 Լաթակաղմ.	10
8. Աւերուժն Անի Մայրաքաղաքին. Թատերգ. Պ. Դուրեանի.	2
9. Յաւին Տունը. (Բանի յիշատակներ). Լ. Շաթրեանի.	4
10. Եղիա Տէմիրճիպաշեան. Լ. Իսաճանեան. (պատկերով.)	1.50
11. Երիսաարդը. Տօթ. Լուի Պէնքո. Թարգմ. Ռոզմէրի.	1.50
12. Չայնագրուած Հայկական Երգարան. Բ. Կանաչեան, Ա. մաս պատկերազարդ, 40 էրէքերով.	5
Նոյն, բաժանորդագրութիւն Բ. Գ. և Դ. մասերու.	15
13. Ժամանակ եւ Խորհուրդ իւր. Խրիմեան Հայրիկ.	1.50
Հասոյթը ի նպաստ Վանայ վարազայ վանքին.	1.50
14. Սով եւ Մահ. Ուրուր.	1
15. Միկզ, Բերուածներ. Վահան Թովմենցի.	2.50
16. Ընդարձակ Հայկական Երգարան. Դ. Հատոր.	3.50
Նոյնը Ա. և Բ. Հատոր միացեալ 10, Լաթակաղմ.	12 50
17. Հայ Հերոսի Արեւանքը. Աշուղ Շահնազար.	3
18. Ֆրանսո-թրական պատերազմ կամ Զարբլը Արքին աղա, կատակերգ. Եր. Օտեան, 3 արար.	3
19. Պատասխան Ռուս Սինոդի բանադրագրին. Թովմէյ.	1
20. Յիշատակարան. Երեւելի Հայերու լուստաիպ պատկերները, ձեռագիրները, կենսագրութիւնները, հեղինակութիւնները և գրուածքները, շքեղ տպագրութեամբ և թուղթով, տետր	2
21. Չավալլոն. Դիւթ. կատակախաղ. Եր. Օտեան.	1
22. Ապս-իւ-Համիս Բ. Խ. Գովալճեան.	1
23. Կրթական վերածնունդ. Յ. Նազարեան.	4
24. Կատակերգութիւն Երից Քաջաց. Մ. Պէշկէթաշեան.	1
25. " Աւագակաց " "	1
26. Սել Պատկերներ, Յօրինեց Տիգրան Աշեան	2.50

2013

